

այնպէս բացարձակ կերպով, ինչպէս պատմել է պ. Եսայեան, այն է՝ Նոյեմբարի առնանգումը, բայց այդ առաւելութիւն չէ, այլ պակասութիւն:

Պ. Եսայեանի պատկերները ցոյց են տալիս, որ նա ոգեւորուած է ժողովրդական նախապաշարմունքների հետ կրուելու ցանկութեամբ և ղեկավարում է համակրելի դիտումներով, ուստի շատ տարօրինակ է, որ նա իրան թոյլ է տալիս առնանգման այնպիսի ցինիկ նկարագրութիւն, որ վայել է միայն պոռնկագիրներին:

Եթէ այդ նկարագրութիւնը չը լինէր, մենք պ. Եսայեանի պատկերը կը դասէինք այն զրբոյկների շարքը, որոնք գեղարուեստական արժանաւորութիւններ չ'ունենալով հանդերձ՝ կարող են համարուել օգտակար ընթերցանութեան նիւթ՝ գեղարուեստականութեան նկատմամբ ոչ խստապահանջ ընթերցողների համար:

Տ. Յ.

Ա. Յ. Աւան. «Արիւն». Քրդական բարբերից. Արտատպած «Ճարագ» շաբաթթերթից. 24 եր. դ. 10 կ. Ս.-Պետերբուրգ, 1902 թ.

Բաւրը և Մեհրին երեսայութիւնից սկսած սիրում են միմիանց: Նրանք պիտի վերջիվերջոյ ամուսնանան: Բայց Մեհրին սաստիկ դուր է գալիս հարեան ցեղին պատկանող մի քրդի, Ռահիմ բէգի որդի Սուլօին:

Մեհրի հայրը մերժում է բոլոր փեսացուներին և ի միջի այլոց նաև Սուլօին: Նա ու Բաւրի հայրը վաղուց վճռել են ամուսնացնել իրանց փոխադարձ սիրով կապուած զաւակներին: Սուլօն վճռում է փախցնել Մեհրին և մի օր, երբ Մեհրին իր ընկերուհիների հետ զբօսնում է դաշտում, Սուլօն երկու ընկերներով յարձակւում է նրա վրայ ու փախցնում *) Բաւրը իմանում է այդ, ընկնում է նրանց յետևից, սպանում է Սուլօին և ազատում Մեհրին: Մեհրին պիտիւում է ուշաթափութիւնից՝ նայում է Բաւրին, բացականչում է. «Ա՛խ, փրկիչս...» և «ապա մի վայրկեան լռութիւնից յետոյ յետ ընկաւ, չոսած աչքերով նայեց հօրը և կրկին չչնջաց՝ յենուելով Բաւրի կրծքին.

*) Այդ տեսարանը շատ յիշեցնում է պ. Աօի «Մեկիւրի Աղջիկ»-ի և պ. Ահարոնեանի «Սև օրեր»-ի նոյնանման տեսարանները, բայց գեղարուեստօրէն անհամեմատ ցած է նրանցից:

—Հայրիկ, ազատիր ինձ վերջապէս:

—Դու արդէն ազատ ես,—խօսեց հայրը՝ առանց ճշտութեամբ ըմբռնած լինելու այդ երկդիմի խօսքերի նշանակութիւնը, և մտածմունքի մէջ ընկաւ.—չը լինի թէ ցնորում է,—չնչաց ինքն իրան:

—Հայրիկ, թոյլ տուէք ինձ նրա ձեռքը խնդրել ձեր հայրական օրհնութեամբ հանդերձ, և նրա ազատութիւնն ու բախտաւորութիւնը ապահովուած կը լինի ընդ միշտ,—մէջ մտաւ Բափրը՝ ամօթխածութիւնից չիկնած ու այլայլուած:

«Հայրիկը» իհարկէ՝ համաձայնում է և օրհնում է Բափրին: Քիւրդ ամբոխը այդ բանը տեսնելով ու լսելով՝ ոգևորւում է ու սկսում է գոռալ. «Ամէն, ամէն... կեցցէ երջանիկ և ազնիւ զոյգը. կեցցէ Բափրը և Ահմէդ աղան», և երկնքից անշուշտ չորս խնձոր է իջնում, մէկը՝ Բափրի, միւսը՝ Մեհրիի, երրորդը նրանց ֆրանսերէնի ուսուցչի համար, որովհետև Բափրն ու Մեհրին սմբողջ պատմութեան ընթացքում խօսում են ֆրանսիական ուսմանների ոճով, իսկ այդ անկարելի կը լինէր, եթէ ներանը չ'ունենային ֆրանսերէնի ուսուցիչ. չորրորդն էլ այն ըրիստոնեայ քարոզչի համար, որ քրդերին սովորեցրել է քրիստոնէական «ամէն, ամէն» բացականչութիւնը:

Տ. Յ.

Վ. Ի. Նեմիրովիչ Դանկելօ. «ԹԻՍՏՐՈՒՆԻ». 20 եր., դ. 2 կող., Ս.-Պետերբուրգ, 1903 թ.

Նաստասիա Իվանովնա Պետրովան անային վարժուհի է եղել: Այժմ նա զբաղարուհի է: Ծանր է զբաղարի պարտականութիւնը, բայց Նաստասիա Իվանովնան ուրախութեամբ կրում է այդ խաչը: Նա ապրում է իր աշխատանքով, թէկուզ դժոխային աշխատանքով, և նա գոհ է:

Սակայն նրա «հոգին յօժար է, բայց մարմինը տկար»: Նա թոքախտ ունի: Նա անկարող է տանից դուրս գալ: Ստիպուած է պառկած մնալ:

Տպարանը բարեգործական հիմնարկութիւն չէ: Տպարանատէրը նրան դուրս է անում: Նա մնում է անգործ: Նա կարող է ապահով կեանք վարել, եթէ համաձայնի որեւէ հարուստի սիրուհին դառնալ: Նրան առաջարկութիւններ են անում այդ մտքով: Գտնում են նաև միջնորդուհիներ: Բայց նա վճռել է ազնիւ ապրել և ազնիւ մեռնել: Ու նա իրան գցում է Մոսկվա գետը:

Յունիս, 1903.

8